Հետազոտական աշխատանք

**Տիտղոսաթերթ (1 էջ)**

| | |
|---|---|
| **Կազմակերպության տվյալներ**<br>• Անվանում, հասցե<br>• Տնօրեն<br>• Էլ.հասցե<br>• Հեռախոս | «Մասնակցային դպրոց» կրթական հիմնադրամ<br>Վահրամ Սողոմոնյան<br>masnakcayindproc@gmail.com |
| | |
| **Հետազոտության թեմա/վերնագիր**<br>• Հետազոտության թեմա | Բայի կարևորությունը խոսքի մեջ |
| | |
| **Ուսուցչի տվյալներ**<br>• Ա.Ա.Հ.<br>• Մասնագիտություն<br>• Հեռախոս<br>• Էլ. հասցե<br>• Դասավանդվող առարկաներ<br>• Դասարաններ | Ենոքյան Ռուզաննա Ենոքի<br>Հ. լեզվի և գրականության ուսուցիչ<br><br>Մայրենի, հայոց լեզու, գրականություն<br><br>5-9-րդ դասարաններ |
| **Ուսումնական հաստատության տվյալներ**<br>• Անվանումը, հասցե<br>• Հեռախոս<br>• էլ. հասցե (տնօրենության)<br>• Web կայքի հասցե | Գառնի բանավանի հիմնական դպրոց<br>Կոտայքի մարզ, Գառնի բանավան<br>garnibanavan@mail.ru<br><br>garnibanavanschoolsite.am |

## Բովանդակություն (1 էջ)

Ներածություն----------4

Բայի կարևորությունը խոսքի մեջ----------7

Եզրակացություն----------18

Օգտագործված գրականության ցանկ----------19

## Ներածություն (1-ից 2 էջ)

| | |
|---|---|
| **Նպատակը եւ հետազոտական հարցը** | Հետազոտության նպատակը՝ Ուսումնասիրել բայի կարևորությունը խոսքի մեջ, կիրառությունն ու գործածությունը հիմնական դպրոցում:<br><br>Հետազոտության խնդիրը՝ |

1. Ինչպե՞ս զարգացնել աշակերտների գրավոր և բանավոր խոսքը՝ կարևորելով բայերի ճիշտ կիրառությունը:

Բայ խոսքի մասի ուսուցումը դպրոցում կատարվում է գոյականների ուսուցմանը զուգահեռ՝ որպես իրականությունը արտացոլող, միմյանց լրացնող իրողություններ: Տարրական դասարանների առաջին մակարդակում դրանք տարբերակվում են որպես առարկա և գործողություն ցույց տվող բառեր, որոնց խոսքային կիրառությունները ներկայացվում են բառակապակցությունների միջոցով: Լեզվական տարրական գիտելիքների մակարդակում բայի տարբերակման հիմքում դրվում են հատկապես եմ օժանդակ բայի ուղղագրության հիմունքները՝ դրական և ժխտական խոնարհումների համեմատությամբ: Այնուհետև գործնական եղանակով աշակերտներին են ուսուցանվում բայի դեմքի, թվի, ժամանակի հասկացությունները: Բայի կիրառությունների մասին վարժությունները հիմնականում կատարվում են խմբային եղանակով. ▪ առարկայական նկարներին համապատասխան գործողություններ թվարկել և կազմել հոմանիշ բայերի շարք, ▪ բնագրում գտնել գործողությունը և այն կատարող առարկան ցույց տվող բառերը և բացատրել դրանց՝ դեմքով, թվով համաձայնվելու երևույթը, ▪ բնագիրը վերաշարադրել՝ ըստ հնարավորության բայերը գործածելով ժխտական ձևերով [4, 8]: Միջին դպրոցի գիտելիքների համակարգում «Բայ» թեմայի գիտական ուսուցումը կատարվում է 7-րդ դասարանից: Զարգացնելով աշակերտների ճանաչողական-տրամաբանական

| | |
|---|---|
| | կարողությունները և հմտությունները՝ հանձնարարվում է, որ հիմնական դպրոցն ավարտողը կարողանա ճիշտ խոնարհել և խոսքում կիրառել բայերը՝ ▪ կողմնորոշվելով, թե տրված կառույցներում բայի որ ժամանակաձևն է պետք տեղադրել: |
| | |
| **Թեմայի կարեւորությունը եւ նշանակությունը Ձեր/թիրախային խմբի համար** | Վերոհիշյալ թեմայի վերաբերյալ գիտելիքների լիարժեք առկայությունը թույլ կտա ունենալ բանավոր և գրավոր գրագետ և սահուն խոսք: |
| | |
| **Ո՞ր առանցքային կոմպետենցիային/կարողունակությանն է ուղղված նպատակի ուսումնասիրությունը** | Լեզվական գրագիտություն և կարողունակություն<br>Սովորել սովորելու կարողունակություն |
| | |
| **Վերապատրաստման ո՞ր թեմայի շրջանակում է անդրադարձ կատարվել այս հիմնախնդրին/ոլորտին** | Դիրքորոշում և արժեք<br>Առարկայի դասավանդման մեթոդիկա |

**Պարագրաֆներ/մասեր (10-15 էջ)**

| | |
|---|---|
| **Գրականության ակնարկ**<br>● Մեջբերումներ արդեն արված հետազոտություններից,<br>● Մեջբերումներ գրականությունից, | Խոսքի մասերի մեջ բայը յուրահատուկ տեղ ունի: Ունենալով ստորոգման հատկանիշ և բերականական հարուստ կարգեր ու տարբեր դրսևորումներ՝ բայը շարահյուսության մեջ կարող է կատարել զանազան պաշտոններ: Ամենից առաջ նա առանձին կարող է գործածվել՝ որպես խոսքի միավոր և ինչպես Մ. Աբեղյանն է իրավացիորեն նշում, բայց «մենակ խոսք է դառնում», այսինքն հաղորդակցական ոլորտում նա դառնում է նաև նախադասություն: |

| | |
|---|---|
| տեղեկության վստահելի աղբյուրներից:<br><br>**<u>Պարտադիր է կատարել հղում աղբյուրին</u>** | Ինչ խոսք այս հատկանիշը բնորոշ է դիմավոր բայերին, թե անորոշ դերբայն էլ, ինչպես հետո կտեսնենք, որոշակի հնչերանգի շնորհիվ կարող է կատարել նախադասության դեր: Ինչևէ խոսելով դիմավոր բայի մասին հարկ է ընդգծել մի շատ կարևոր ու նուրբ պահ. երբ ասում ենք դիմավոր բայը հաղորդակցական ոլորտում կարող է դառնալ նախադասություն, նկատի ունենք նյութական, լիարժեք բովանդակություն կամ իմաստ ունեցող բայերը, բայց ոչ բնավ այն բայերը, որոնք կարող են ունենալ դիմավոր բայի բերականական բոլոր կարդերը, այդուհանդերձ, զուրկ լինել բառիմաստային լիարժեքությունից: Վերջին դեպքում այդ բայերը ցուցաբերում են վերջական իմաստ կամ ոճական արժեք, հետևաբար միայնակ «խոսք կազմել չեն կարող» համեմատեք հետևյալ զույգերը<br><br>1. Սուրենը հանգիստ քայլում է փողոցում:<br>2. Ծաղիկները դույլեի մեջ թառամել են:<br>3. Շինարարները հեռացան հրապարակից:<br>4. Արտակը խոնարհաբար գլուխ տվեց ու գնաց<br><br>1. Արամը ճանաչված վիրաբույժ դարձավ:<br>2. Նարեկացին իրավամբ համարվում է հայ վերածնունդի հիմնադիրը:<br>3. Կանգնած ծառն ինձ մի պահ մարդ թվաց:<br>4. Սարգսյանը ժողովի նախագահ ընտրվեց:<br><br>Առաջին խմբի նախադասություններում ենթական ու ստորոգյալը առանձին կարող են գործածվել կազմելով անկախ նախադասություններ (Սուրենը քայլում է, ծաղիկները թառամել են…), մինչդեռ երկրորդ խմբում նշված բայերը, ունենալով վերացական իմաստ, անկախ չեն կիրառվեւմ, այլ որոշակի բառերի (ստորոգելի) հետ են կազմում ստորոգյալ իրենք էլ կատարելով հանգույցի դեր (վիրաբույժ դարձավ, հիմնադիր է համարվում և այլն): Այսպիսով<br><br>1.հաղորդակցական ոլորտում նախադասություն կարող են կազմել (դառնալ) միայն այն բայերը, որոնք ունեն նյութական բովանդակություն և դիմավոր ձևեր են:<br><br>2.Անդեմ բայական նախադասություններ կարող է ձևավորել նյութական լիարժեք իմաստ ունեցող անորոշ դերբայը ունենալով յուրահատուկ հնչերանգ և հնչերանգային ավարտ պայմանավորված խոսքային իրադրությամբ: |

3. Քանի որ նախադասության գլխավոր անդամները ենթական ու ստորգյալն են, և ստորոգյալ արտահայտվում է խոնարհված բայով, հետևաբար՝

ա)խոնարհված բայերով արտահայտված միավորները կատարում են պարզ ստորոգյալի պաշտոն.

բ)խոնարհված բայերով (էական, վերացական բայ) և անվական-հատկանիշային մասով ձևավորված միավորները կատարում են բաղադրյալ ստորոգյալի պաշտոն:

4.Բայի անդեմ ձևեր կամ դերբայները կարող են կատարել նախադասության զանազան անդամների պաշտոններ:

Այժմ առանձին-առանձին ուսումնասիրենք բայի կատարած պաշտոնները խոսքում:

## ԴԻՄԱՎՈՐ ԲԱՅԸ՝ ՊԱՐԶ ՍՏՈՐՈԳՅԱԼ. ՈՒՍՈՒՑՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Բայական նախադասությունները (այն նախադասությունները, որոնց ստորոգյալ արտահայտված է դիմավոր բայերով) ճնշող մեծամասնություն են կազմում թե բանավոր և թե գրավոր խոսքում: Եվ դա միանգամայն տրամաբանական է, որովհետև մարդն ավելի շատ պատմում է, նկարագրում, հաղորդակցվում զանազան նպատակներով և այլն. այս բոլորը նա արտահայտում է գերազանցապես դիմավոր բայերի միջոցով:

Պարզ ստորոգյալն արտահայտում է խոնարհված բայով. որն էլ կարող է լինել համադրական և թե վերալուծական կառուցվածքի: Օրինակ՝ գնաց, կգնա, գնացեք, գնում է, գնալու է, գնացել է, պար է գալիս, եռ է գալիս, աչքի ընկավ, ականջ դրեց, սիրտ արեց, գլուխ տվեց և այլն: Որքան էլ տարբեր կազմություն ունենան, այնուհանդերձ, այս բայերը որևէ եղանակի, ժամանակի դեմքի ու թվի ձևեր են և նախադասության մեջ պարզ ստորոգյալ են դարնում, Օրինակ՝

1.Արմենը գնաց գրադարան:

2.Հասմիկը ուրախությունից պար է գալիս:

3.«Ջարդեցենք անդուլ, անգութ, անխնա»(Տերյան):

4.Սուրենը ականջ էր դնում թռչունների ծլվլոցին:

Ուսումնասիրելով բայի եղանակները՝ ուսուցիչը կանգ է առնում ամեն մի եղանակի բայաձևերի ոչ միայն ձևաբանական հատկանիշների, խոնարհման առանձնահատկությունների, այլև նրանց կիրառությունների վրա: Բերելով որոշակի

օրինակներ որոշակի նախադասություններում՝ ուսուցիչը ընդգծում է այդ կիրառական առանձնահատկությունները՝ նշելով նաև ոճական նրբերանգները: Այսպես. սահմանական եղանակի բայաձևերը հիմնականում գործածվում են պատմողական հնչերանգի նախադասություններում, քանի որ խոսողը դրանցով որևէ եղելություն է հաստատում կամ ժխտում, նկարագրում, հայտնում որևէ իրողություն և այլն: Ընդ որում, ոճական տարբեր նրբերանգներ ունեն ոչ միայն բաղադրյալ ու պարզ ժամանակները, այլև հենց իրենք՝ տարբեր բաղադրյալ ու պարզ ժամանակները: Օրինակ՝ ներկա ժամանակի բայաձևերը (գնում են, խոսում են, ասում ենք, նկարում ենք, պարում ենք և գիտեմ, ունեմ, արժեմ, կամ բայերը), այդպիսին լինելով հանդերձ, ժամանակային տարբեր տևողություն (շարունակություն) են ունենում: Ավելի. պակասավոր բայերը (գիտեմ, ունեմ...) ցուցաբերում են մի տեսակ կատարյալության նրբերանգ. դա բխում է նրանց պարզ ժամանակաձև լինելուց (հմմտ. անցյալ կատարյալի հետ): Իսկ, ասենք, նույն պակասավոր բայերի «կանոնիկ» ձևերը կամ, այսպես կոչված, հավելավորները, որոնք շատ սակավ գործածություն ունեն, տևականության ավելի շեշտված նրբերանգ ունեն:

Այսպես. գիտենում եմ, ունենում եմ, արժենում է և այլն կամ՝ վախում եմ և վախենում եմ, ուզում եմ և ուզենում եմ և այլն. սոսկածանցավոր ձևերը ավելի են ընդգծում իրենց տևականությունը: Ոճական շատ նուրբ առանձնահատկություններ են հանդես բերում նաև նույն՝ ներկա ժամանակի բայաձևերը. ասենք Սուրենը զարմանալի ճշտությամբ է պտտվում երկաթաձողի վրա, և՝ Երկրագունդը պտտվում է իր առանցքի շուրջը: Առաջին նախադասության մեջ նշված բայը (ստորոգյալ) բուն ներկա է (այսինքն՝ այնպիսի ներկա, որը «սովորութային» բնույթ ունի. մի հատկանիշ, որ ընդհանրական է. նա առհասարակ լավ է պտտվում երկաթաձողի վրա), մինչդեռ երկրորդ նախադասության ստորոգյալը իր՛ոք որ պատմական ներկա է, այսինքն՝ երկրագունդը միշտ պատտվել է, պտտվում է և պիտի պտտվի իր առանցքի շուրջը: Ոճական ուրույն երանգ ունեն նաև այն ներկա ժամանակաձևերը, որոնք սովորութային են (Սուրենն առհասարակ լավ է աշխատում, միշտ օգնում իր ընկերներին, ժամանակին կատարում տրված հանձնարարությունները և այլն) և իրենց բովանդակությամբ ապառնի: Ի դեպ, վերջինս գործածվում է միայն ժողովրդախոսակցական լեզվում և հանձնարարելի չէ գրական լեզվի համար (Վաղը գնում եմ, դու ինձ հետ գալի՞ս ես թե չէ): Կամ՝ անցյալ կատարյալ ժամանակաձևը երբեմն նույն

ժողովրդախոսակցական լեզվում գործածվում է ներկայի իմաստով (Ես այժմ գնացի, հետո զանգ կտամ քեզ...): Ներկան ունի նաև, այսպես ասած. առածական բնույթ, ինչպես իրավացիորեն նշում է Մ. Աբեղյանը (երկաթը տաք-տաք են ծեծում, ճտերն աշնանն են հաշվում...): Տարբեր ոճական արժեք ունեն նաև անցիալ ժամանակի բայաձևերը: Օրինակ՝ գնացել է և գնաց:

Անցյալ կատարյալը գործածվում է սովորաբար այն դեպքում, երբ խոսողը գործողությանը ներկա է եղել կամ իրեն պատկերացնում է գործողությանը մասնակից: Օրինակ՝ Ավտոբուսը հենց նոր գնաց, Արամը տեսա՞վ քեզ, Վարդանը Ավարայրի դաշտում հերոսաբար կռվեց և անմահացավ:

Ի դեպ, հանձնարարելի չէ անցյալում եղած դեպքերը պատմել (գրել) անցյալ կատարյալով: Ընդգծվածն ու հանձնարարելին պատմական ներկան է (կռվում է, անմահանում է) կամ վաղակատարը (կռվել է ու անմահացել է): Տարբեր նրբերանգներ ունեն նաև ապառնիները: Օրինակ՝ գնալու է և գնա, կգնա, գնացեք և այլն: Այսպես.

1. Արտակը գնալու է Մոսկվա:

2. Արտակը երևի գնա Մոսկվա:

3. Արտակը կգնա Մոսկվա:

4. Արտա՛կ, գնա Մոսկվա:

Առաջին նախադասության նշված ստորոգյալը ցույց է տալիս իրականում կատարվելիք գործողություն, երկրորդում կասկածելի է նրա գնալը, երրորդում՝ ենթադրելի (մասամբ՝ հաստատ,) չորրորդում բոլորովին այլ է այդ կատարվելիք գործողությունը, նախ՝ նրանում ներկայի երանգ կա (հրամայողի կողմից), կատարողի կողմից, սակայն, այն ապառնի է: Ոճական այլ երանգ ունեն հարադրավոր կառուցվածքները՝ եփ է գալիս, գլուխ է տալիս, աչք է գցում, վազ է տալիս, սիրտ է անում, ձեռք է քաշում և այլն, և այլն: Սրանք, անտարակույս, ունեն ժողովրդախոսակցական լեզվին հատուկ երանգ և խիստ սակավադեպ են գրական հայերենում: Դրանք հիմնականում գործածվում են գեղարվեստական խոսքում՝ կերպարի տիպակացնման-անհատականացման, լեզվական կոլորիտ ստեղծելու նպատակով և այլն: Այս բոլոր հարցերը յուրացնել տալու համար ուսուցիչը բերում է որոշակի բնագրեր, գեղարվեստական խոսքանմուշ, որոնց միջոցով հաստատում է իր ասածը: Բոլոր դեպքերում, սակայն, ուսուցիչը չպիտի մոռանա ընդգծել այն ճշմարտությունը, որ, դիցուք, այս կամ այն բայ-ստորոգյալի ժամանակաձևը, եղանակաձևը և այլ կարգ որոշելիս պիտի առաջնորդվել նրա

արտահայտության պլանով, այսինքն՝ բառաձևո՛վ և ո՛չ բնավ նրա իմաստով կամ տրամաբանորեն: Դիցուք՝ Դու վա՞ղն ես գնում, թե՞ մյուս օրը նախադասության ստորոգյալը միմիայն սահմանական եղանակի ներկա ժամանակի բայ է (ուրիշ ոչ այլ եղանակի ու ժամանակի):

Եվ այսպես, բոլոր եղանակների ու նրանց ժամանակների մասին խոսելով և համապատասխան օրինակներ բերելով, բայերը խոնարհելով ու վարժություններ կատարել տալով՝ ուսուցիչը ընդգծում-հաստատում է, որ դրանք խոնարհված բայեր են. մի ճշմարտություն, որ ոչ ոք չի կասկածում (աշակերտները). իսկ, ասենք ստորոգյալը, նրա արտահայտությունը և հարակից այլ թեմաներ անցնելիս ուսուցիչը որոշակի բնագրային օրինակների վրա զուգադրում-հակադրում է պարզ և բաղադրյալ ստորոգյալները՝ հիշեցնելով խոնարհված բայերը, ապա մանրազնին վերլուծելով մի կողմից՝ այդ բայերը, մյուս կողմից՝ բաղադրյալ ստորոգյալների կառուցվածքային յուրահատկությունները, զուգահեռներ է անցկացնում բոլոր եղանակների ու պարզ ստորոգյալների միջև:

ԴԻՄԱՎՈՐ ԲԱՅԸ՝ ՀԱՆԳՈՒՅՑ

Հասկանալի է, որ նյութական բովանդակություն ունեցող ոչ բոլոր բայերը կարող են հանգույցի դեր կատարել, ընդհակառակն, այդպիսի բայերը ինչպես տեսանք,նախադասության մեջ կատարում են պարզ ստորոգյալի պաշտոն, սակայն կան մի քանի պակասավոր բայեր, որոնք ստորոգելիների հետ կատարում են ստորոգյալի պաշտոն: Քանի որ հնարավորին չափ ընդարձակ է ներկայացվել ստորոգելին, այստեղ կանգ առնենք միայն հանգույցի դեր կատարող որոշակի բայերի մեկբանման վրա: Եմ բայը, որպես պակասավոր բայ. ցույց է տալիս լինելություն, առկայաթյուն, ինչպես՝ Ես ուսուցիչ են, դու բժիշկ ես, նա լավ մարդ է և այլն: Այդ բայի դրական և ժխտական խոնարհման բոլոր ձևերը ունեն մեկ գործառույթ՝ ֆունկցիա, այն է՝ առարկան կամ հատկանիշը (լայն առումով ընդունված է միայն հատկանիշ արտահայտությունը) ենթակային կապելը՝ հանգուցելը որոշակի ժամանակում: Այստեղից էլ՝ նրա անունը՝ հանգույց, այսինքն՝ հատկանիշը ենթակային հանգուցող՝ կապող, վեագրող: Այն չպիտի շփոթել օժանդակ բայերի հետ, որովհետև՝

ա) եթե պակասավոր բայ-հանգույցը կամ, ինչպես ընդունված է ասել, էական բայը բառական ինքնուրույն միավոր է՝ մտնելով բայ խոսքի մասի մեջ, ապա օժանդակ բայերը միայն դիմային վերջավորությունների դեր ունեն, հետևաբար նրանք ոչ թե բառական միավորներ են, այլ՝

2-րդական ձևույթուներ. հմմտ. Արտակը աշխատող է և՝ Արտակը աշխատում է, Սուրենը ներկարար է և՝ Սուրենը ներկում է...

բ) էական բայը կազմում է բաղադրյալ ստորոգյալ (ինչպես՝ Արուսը ջանասեր է) և դառնում հանգույց, մինչդեռ օժանդակ բայը՝ պարզ ստորոգյալ, ինչպես՝ Գրիգորը աշխատում է:

Նկատենք, որ աշխատում է բայը ձևաբանական ու շարահյուսական մեկ միավոր է (բայ, եղանակային ձև, սահմանական եղանակի ներկա ժամանակ, եզակի թիվ, 3-րդ դեմք և այլն), իսկ շարահյուսական մակարդակում՝ պարզ ստորոգյալ որը, սակայն, հաղորդակցական այլ ոլորտում միայնակ կարող է կատարել նաև ինքնուրյուն նախադասության դեր (Սուրենն ընդունվել է գործարան: Աշխատում է: Պլանները միշտ կատարում է բարեխղճորեն:

- Ինչ՞ է ասում Վարդանը, Գրիգո՛ր:

- Աշխատում է):

գ) Ժխտական խոնարհման ժամանակ «չ» մասնիկը ավելանում է էական բայերի սկզբից՝ միշտ մնալով անփոփոխ (Արամը ուսուցիչ չէ, Ես երգիչ չեմ...), մինչդեռ օժանդակ բայերը դրվում են դերբայներից առաջ, միայն թե եզակի 3-րդ դեմքի չէ-ն դառնում է չի (Նա չի կարդացել):

դ) Էական բայերը, որպես պակասավոր, չեն պատասխանում որևէ հարցի. ընդսմին, բաղադրյալ ստորոհյալին տրվում է նրա վերադրի հարցը, և կրկնվում է հանգույցը: Օրինակ՝

Սա գրիչ է — ի՞նչ է, նրանք ուժեղ էին - ինչպիսի՞ն էին...), մինչդեռ օժանդակ բայերի դեպքում (գրում է, խոսելու էին), այսինքն՝ պարզ ստորոգյալի առկայությամբ տրվում է դերբայի հարցը, և կրնկվում է օժանդակ բայը (տվյալ դեպքում՝ ի՞նչ է անում և ի՞նչ է անելու):

ե) էական բայերը (հանդույցները) ավելանում են ինչպես գոյականին, ածականին, թվականին, դերանուններին, մասամբ էլ՝ մակաբային և, հիարկե, անկախ դերաբայներին (անորոշ, ենթակայական նաև հարակատար), մինչդեռ օժանդակ բայերը՝ միմիայն կախյալ դերբայներին (անկատար, վաղակատար, ապակատար, «կիսով չափ» հարակատար և տալ, գալ, լալ համակատար դերբայներին): Այսքանից հետո ուսուցիչը պիտի բնագրային նյութերի (կամ իր կողմից կազմած խոսքի) հիման վրա, համապատասխան դասանյութն անցնելիս նշի նաև նրանց ու էական բայերի «համատեղ» շարահյուսական պաշտոնը: Պարզ է, որ խոսքը վերաբերում է գոյականին, նրա ուղղական, սեռական հոլովներին (Վարդանը

զորավար է, Այս խաղողը Արտաշատի է), ածականին (Առյուծը ուժեղ է, Եղանակը գարնանային էր), թվականին (Մենք հայուր ենք, հազար ենք, բյուր ենք), դերանուններին (Զեկուցողը դու՞ք եք, Հարցն այսպիսի է...), մակբայներին (Մենք շատ չենք, գետի ընթացքը դանդաղ էր), անորոշ, ենթակայական, հարակատար դերբայներին (Դա վազել չէ, այլ քայլել է, միրգը ուտելու է, Անահիտը պարող է, Թուղթը պատռվող է, Այս խնձորը փտած է, Միրգը հասունացած է)... Իսկ բաղադյալ ստորոգյալ ենթաթեման ուսումնասիրելիս պիտի նշվեն՝

ա) բաղադրյալ է կոչվում այն ստորոգյալը, որը բաղադրված կամ կազմված է անվանական-հատկանշային մասից՝ ստորոգելիից (տես փակագծերի օրինակներում նշված անդամները) և էական բայերից (հանգույցից)՝ եմ, ես, է, ենք, եք, են, էի, էիր, էր, էինք, էիք, էին (նաև իրենց ժխտական ձևերը):

բ) Մեր լեզվում կան մի շարք բայեր, որոնք թեև ունեն եղանակաժամանակային կարգեր (հատկանիշներ), բայց զուրկ են նյութական բովանդակությունից, այսինքն՝ ձևով մտնում են այս կամ այն եղանակի, ժամանակի, դեմքի ու թվի բայերի մեջ, սակայն այնպիսի լիարժեք բովանդակություն կամ իմաստ չեն արտահայտվում, որ միայնակ գործածվեն իրբև ստորոգյալ: Օրինակ՝ Ծիրվանզադեն համարվում է... Նարեկացին հանդիսանում է... Նա դարձավ...

Պարզ է, որ սրանք նախադասություններ չեն, թեև, կրկնում ենք, ենթական էլ է առկա, կարծես թե «ստորոգյալն» էլ: Իրականում, սակայն, այդպես չէ, ստորոգյալի, այսպես ածականը, «կեսն» է առկա՝ միայն հանգույց, որը է պակասվոր բայի համարժեք ունի: Այսպես, Ծիրվանզադեն համարվում է հայ քննադատական ռեալիզմի հիմնադիրը, Նարեկացին հանդիսանում է հայ Վերածնունդի սկզբնավորողը: Արամը բժիշկ դարձավ:

Ի դեպ, խրախուսելիս չէ նման նախադասությունների գործածությունը (համարվում է, հանդիսանում է-ի փոխարեն պիտի կիրառել է պակասավոր բայ-հանգույց):

գ) Մեր լեզվում կան մի շարք բայեր, որոնք իրենց անորոշ իմաստների պաճառով համարվում են վերացական, ինչպես՝ կոչվել, անվանվանել, հորջորջվել կազմել, թվալ երևալ, լինել Սրանք միայնակ ստորոգյալ կազմել չեն կարող, հետևաբար գործածվում են ստորոգելիների հետ՝ իրենք էլ դառնալով հանգույցի դեր կատարող միավորներ: Այսպես. Իր քաջագործությունների շնորհիվ Աշոտը կոչվել է Երկաթ: Ճառն ինձ մարդ թված: Աշոտը լուրջ մարդ է երևում: Դժվար չէ նկատել, որ այս բայերը

իրենց իմաստների շնորհիվ զուգահեռվում են է բային: Նշենք և այն, որ մի շարք նյութական բովանդակություն ունեցող լիարժեք բայեր ևս երբեմն էլ խոսքում գործածվում են վերացական բայերի դերով՝ զրկվելով ինքնուրույն ստորոգյալի գերծառույթ կատարելու հնարավորությունից. օրինակ՝ Գրիգորը մեր գործարանում ավագ ինժեներ է աշխատում: Սարգիսը դիրեկտոր է նշանակվել: Ներսեսը օծվեց կաթողիկոս և այլն:

«Բայ» թեման ուսումնասիրելիս ուսուցիչը պիտի խոսի նաև այդպիսի նուրբ հարցերի մասին, նշի, որ բոլոր բայերը չեն, որ լիարժեք, կայուն իմաստներ ունեն: Այս առիթով պետք է բերի համապատասխան օրինակներ և բացատրի ասելիքը, իսկ «Բաղադրյալ ստորոգյալը» ենթաթեման ուսումնասիրելիս հարկավոր է հիշեցնել վերացական, ոչ լիարժեք իմաստ ունեցող բայեր և պահանջել դրանցով կազմել նախադասություններ:

Այնուհետև գրատախտակին կարող է գրել.

1. Ուսուցիչը սկսեց դասը:
2. Մարդը ձգտում է լույսի:
3. Մենք ցանկանում ենք խաղաղություն
4. Նարինեն աշխատում է օրինիբուն:

Ուսուցիչն սկսեց խոսել:
Նա ձգտում է ապացուցել իր ասելիքը:
Մենք ցանկանում ենք աշխատել:
Նարինեն աշխատում է հիշել իր հետ պատահածը:

Վերլուծելով վերը նշված բոլոր նախադասությունները ուսուցիչը բացատրում է, որ նույն բայերը մի տեղ (խոսքում) կարող են ինքնուրույն գործածվեն իրբև ստորոգյալ, մի այլ տեղ (խոսքում)՝ ոչ: Առաջին խմբի նախադասություններում ստորոգյալներն են սկսեց, ձկտում է, ցանկանում ենք, աշխատում է, որոնք, պարզ է, ունեն իրենց լրացումները (դաս՝ ուղիղ խնդիր, լույսի՝ հանգման անուղղակի խնդիր, խաղաղություն՝ ուղիղ խնդիր, օրինիբուն՝ չափի պարագա), երկրորդ խմբի օրինակներում, սակայն, հիշյալ բայերը անուշ դերբայի հետ ստեղծում են մի ամբողջություն՝ իբրև բաղադրյալ ստորոգյալ. փաստորեն տեղի է ունենում բայերի իմաստային փոխներթափանցում, և արդյունքը լինում է այն, որ այդ բայերը հանդես են գալիս մեկ շարահյուսական պաշտոնով: Այնուհետև ավելացնում է, որ դիմային ձևերը

ոճական–եղանակավորող արժեք ունեն (և ոչ քերականական ինքնուրույն պաշտոն):

Սույն թեման յուրացնել տալուց հետո ուսուցիչը կարող է ավելացնել նաև, որ բայ–հանգույցները նախադասության մեջ կարող են նաև զեղչվել: Զեղչվելիս առաջանում է նաև սուր հնչերանգ, որը գրության մեջ արտահայտված է բութով: Բերվում են համապատասխան օրինակներ: Այսպես.Կարպովը՝ շախմատի չեմպիոն: «Արարատ» ֆուտբոլային թիմը՝ ԽԱՀՄ գավաթակիր: Գործարանը՝ սոցմրցության հաղթող: Այնուհետև նման նախադասություններ ուսուցիչը պահանջում է աշակերտներից, և միասին վերլուծում են դրանք, հիմնավորում կետադրությունը:

Դիմավոր բայը՝ ինքնուրույն նախադասություն

Մեծանուն հայագետ Մ.Աբեղյանը բայն ըմբռնում է յուրովի նա դերբայները բայ չէր համարում, այլ, նայած նրանց ձևաբանական ու շարահյուսական հատկանիշներին, դրանք զետեղում գոյականի, ու մակբայի մեջ: Ինչ մնում է դիմավոր բայերին, ապա, ըստ Աբեղյանի, միայն դրանք են ներկայացնում բայ խոսքի մասը: Ընդ որում, Աբեղյանը բայ էր համարում դիմավոր բայերը, որովհետև «մենակ խոսք են կազմում», այսինքն ինքնուրույն գործածվելով՝ կարող են դառնալ նախադասություն ներ: Այստեղ միայն պետք է ավելացնել միայն ճշմարտությունը որ խոսքը վերաբերում է նյութական բովանդականություն ունեցող բայերին, որոնք ունեն ինքնուրույն, ուղղակի բայական (բայական իմաստ ու գործածություն: Այլապես ևս կան այնպիս, դիմավոր բայեր, որոնք չունեն ինքնուրույն գործածություն, ուղակի իմաստ ու նյութական ու լիարժեք բովանդականություն, ինչպես ասենք, համարվում է, հանդիսանում է, թվաց, երևում է, դառնում է, լինում է և այլն...համեմատենք, օրինակ Մթնեց: Լուսանում է: Վեր կացանք: Հագնվեցինք: Դուրս եկանք և «հանդիսանում է») «Թվաց» «Դարձավ», «Լինում է» և այլն: Այս մասին խոսվել է: Նշենք, սակայն, որ, ճիշտ է, առաջին խմբի դիմավոր բայերը, որոնք ինքնուրույն նախադասությոուններ են դարձել, ինչ-որ տեղ «Թերի» են իրենց խիստ համառոտ բովանդակությամբ, բայց, այդուհանդերձ, գործածելի են խոսքում, մինչդեռ երկրորդ խմբի «նախադասությունները», լինելով խիստ վերացական միտք արտահայտող միավորներ, ինքնուրույնաբար չեն գործածվում, որովհետև ամփոփ միտք չեն արտահայտում: Այն էլ ասենք, որ առաջին խմբի նախադասությունները լեզվում լայնորեն չեն գործածվում. չէ՞ որ հաղորդակցության ոլորտը պահանջում է մտքերի

(նախադասությունների) բազմազանություն. խոսքը գեղեցիկ ու համակողմանի հարուստ լինելու համար անհրաժեշտ է, որ այն կառուցված լինի տառակառույց նախադասություններից… Ահա թե ինչու չեն շատ գործածական պարզ համառոտ նախադասությունները՝ որպես խոսքի բաղադրիչներ: Ինչ մնում է պատասխանական թերի նախադասություններին, ապա դրանք սովորական գործածություն ունեն թե՛ բանավոր թե՛ գրավոր խոսքում: Այստեղ խոսքն իհարկե վերաբերում է այն պատասխանական թերի նախադասություններին, որոնք արտահայտված են դիմավոր բայերով: Օրինակ՝

_ Այսօր ի՞նչ ես արել Վարդուհի:

_ Աշխատել եմ:

_ Որոշակի ասա՝ ի՞նչ ես արել:

_ Գնումներ եմ արել:

_ Հետո՞:

_ Լվացք եմ արե

_ Միա՞յն այդքանը:

_ Նաև արդուկ եմ արել:

_ Ճաշ պատրաստե՞լ ես:

_ Պատրաստել եմ:

_ Երեխային մանկապարտեզից բերե՞լ ես:

_ Չեմ բերել:

_ Այդ գործն էլ պիտի անես:

_ Գնում եմ:

Նկատենք, սակայն, որ այդպիսի թերի նախադասությունները դիպուկ են, կարճ «շարժուն», ուստի և շատ տարածված են խոսքում: Ավելորդ չէ նշել նաև, որ պատասխանական թերի նախադասությունները, ունենալով ընդգրկման, «ինֆորմացիոն» լայն հնարավորություններ, կարող են արտահայտվել նաև վերացական բայերով, ինչպես՝

- Դու համոզված ես, որ նա Արտակ Սարգսյանն էր:

- Թվաց միայն:

- Եղել են դեպքեր, որ նա ուշացել է աշխատանքից:

- Եղել են:

- Արտակը հմուտ մասնագետ է դարձել:

- Դառնում է:

| | |
|---|---|
| | Ինչ խոսք, ընդգծյալ թերի նախադասությունները գրավոր խոսքում շատ տարածված չեն, բայց և գործական են հատկապես բանավոր խոսքում: Երկու խոսք՝ բարդ նախադասություններում հանդես եկող դիմավոր բայերի մասին: Խոսքը լինելով ըստ ամենայնի բազմազան՝ կարող է արտահայտված լինել նաև զանազան դիմավոր բայերով: Ընդ որում, լեզվում շատ են այնպիսի բարդ նախադասությունները, որոնք կամ համադասական են, կամ ստորադասական: Ընդսմին, կան բարդ համադասական նախադասություններ, որոնք կազմված են լինում երկու դիմավոր բայից, ինչպես՝ Ամպեց ու սկսեց անձրևել, Եկանք ու նստեցինք, Վեր կացան ու հեռացան: Քիչ չեն նաև այնպիսի բարդ ստորադասական նախադասությունները, որոնք դարձյալ կազմված են լինում երկու դիմավոր բայերից, որոնցից մեկը գերադաս է լինում, մյուսը ստորադաս, ինչպես Թվաց՝ հասկացել է, Վեր կացավ գնա, Ասաց՝ գալու եմ, Կաշխատես՝ կստանաս, Տաս՝ կուտի, Չտաս՝ ձայն էլ չի հանի:<br><br>Պարզ է, որ անծաղկապ ստորադասական նախադասությունները գործածական են հատկապես բանավոր խոսքում, իսկ առհասարակ նշված նախադասությունները և (դրանց նման ուրիշները) գրավոր խոսքում լայն տարածում չունեն: Ամփոփելով վերն ասվածը՝ կարող ենք ընդգծել, որ դիմավոր այն բայը, որն ունի նյութական լիարժեք բովանդակություն և ուղղակի իմաստ, հաղորդակցական ոլորտում դառնում է նաև ինքնուրույն նախադասություն, որովհետև ունի ստորոգում՝ ամփոփ միտք արտահայտելու հատկություն: Այն էլ ասենք, որ, ճիշտ է, նյութական բովանդակություն և ուղղակի իմաստ ունեցող բայը կարող է գոր գործածվել որպես նախադասություն, սակայն դրանք զանգվածային կիրառություն չունեն որովհետև միայն բայով քիչ տեղեկություն է հաղորդվում համապատասխան միտք արտահայտելու համար. չէ՞ որ հաղորդակցական ոլորտում միայն գործողություն նշելը բավարար չէ, հարկավոր է նաև արտահայտել այդ գործուղության հետ կապված այլ և այլ հանգամաքներ: |
| | |
| **Օգտագործված մեթոդները, գործիքները** | Աշխատանք զույգերով՝ գործընկերների ակնարկ<br>Ստեղծագործական առաջադրանքներ |

| | Քարտային աշխատանքներ |
|---|---|
| | |
| **Իրականացման ժամանակահատվածը** | O1.0<br>9-20.<br>09 |
| | |
| **Թիրախ խումբը և շրջանակը /քանակ, սեռային բաշխում/** | 7-րդ դասարանի աշակերտներ<br>18 աշակերտ<br>Աղջիկ՝ 10, տղա՝ 8 |
| | |

**Եզրակացություններ, առաջարկություններ (1-2 էջ)**

| | |
|---|---|
| **Վերհանված արդյունքներ, եզրակացություններ, պատասխան հետազոտական հարցին** | Խոսքի մասերի մեջ բայը յուրահատուկ տեղ ունի: Ունենալով ստորոգման հատկանիշ և քերականական հարուստ կարգեր ու տարբեր դրսևորումներ՝ բայը շարահյուսության մեջ կարող է կատարել զանազան պաշտոններ: Ամենից առաջ նա առանձին կարող է գործածվել՝ որպես խոսքի միավոր և ինչպես Մ. Աբեղյանն է իրավացիորեն նշում, բայց «մենակ խոսք է դառնում», այսիքն հաղորդակցական ոլորտում նա դառնում է նաև նախադասություն: Ինչ խոսք |

| | |
|---|---|
| | այս հատկանիշը բնորոշ է դիմավոր բայերին, թև անորոշ դերբայն էլ, ինչպես հետո կտեսնենք, որոշակի հնչերանգի շնորհիվ կարող է կատարել նախադասության դեր: |
| | |
| **Այլ տեղեկատվություն** | |

## Օգտագործված գրականության ցանկ (1-2 էջ)


1. Էդ. Աղայան, Հոլովում և խոնարհում, Երևան 1967:

2.Մանվել Աստրյան, Ժամանակակից հայոց լեզու, ձևաբանություն, Երևան 20023. Խաչատրյան Ս. և ուրիշներ, Հասարակագիտության ուսուցման արդի հիմնահարցեր, «Տիգրան Մեծ», Երևան, 2005:

4. Ա. Աբրահամյան, Բայը ժամանակակից հայերենում, Երևան 1962

**Հավելվածներ**

| | |
|---|---|
| **Հաշվետվության կցված նյութեր**<br><br>● Հետազոտության գործիքներ (հարցաթերթիկներ կամ այլ)<br>● Նկարներ<br>● Արդյունքներ | |